

Անցումային հարցերով մասնագետ

**POSITION TITLE:** Transition Officer (TOR attached)

**DURATION:** 1 year

**LOCATION:** Yerevan, Armenia

**OPENING DATE:** 22 November, 2021

**APPLICATION DEADLINE:** 05 December, 2021

**STARTING DATE:** as soon as possible

**SALARY:** Competitive

**APPLICATION PROCEDURES:** Interested applicants should submit their CVs to: [secretariat.ccm@gmail.com](mailto:secretariat.ccm@gmail.com). Please indicate in the subject line of your e-mail the title of the position that you apply for. Only short-listed candidates will be invited for interviews.

# Անցումային հարցերով մասնագետի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

### I. Ընդհանուր դրույթներ

Անցումային հարցերով մասնագետը պետք է աշխատի Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված պայքարի միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) ենթակայության ներքո:

Անցումային հարցերով մասնագետը պետք է սերտորեն համագործակցի Վերահսկողության հարցերով ԱԽ-ի և Վերահսկողության հարցերով մասնագետի հետ: Նա հաշվետու է ՄՀՀ-ին:

### II. Շրջանակ

Անցումային հարցերով փորձագետը՝ Վերահսկողության հարցերով խորհրդատուի և Վերահսկողության ԱԽ-ի հետ համատեղ, պետք է համակարգի Վերահսկողության նախագծի աշխատանքները՝ ապահովելով բոլոր գործողությունների՝ մասնավորապես կայունության կամ անցման հետ կապված հիմնահարցերի, համաֆինանսավորման պարտավորությունների իրականացման/համաֆինանսավորման հսկողության (ելնելով երկրի համատեքստից), առողջության համապարփակ ապահովագրության ճշգրիտ արտացոլումն և մշտադիտարկումը:

Վերահսկողության հարցերով խորհրդատուի և Վերահսկողության ԱԽ-ի հետ համատեղ պետք է զեկուցի ՄՀՀ-ին հիմնահարցերի մասին և առաջարկի ձեռնարկվելիք գործողություններ:

### Նպատակ

Նպատակ է Հայաստանում խոցելի խմբերի, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ՏԲ հիվանդների խնամքի և աջակցության ծառայությունների համար ֆինանսական հասանելիության արդյունավետ համակարգի ներդրմանը:

Անցումային հարցերով խորհրդատուն, Վերահսկողության ԱԽ-ի և Վերահսկողության հարցերով խորհրդատուի հետ համատեղ, պետք է ներկայացնի պարբերական հաշվետվություն, որը կպարունակի հիմնական եզրակացություններ ՄԻԱՎ-ի և ՏԲ-ի փոխհատուցումը Առողջության Համապարփակ Ապահովագրության ծառայությունների հիմնական փաթեթի շրջանակում ընդգրկելու մասին:

Պայմանագրի կատարման ժամկետը և ակնկալվող տևողությունը 2 տարի է:

### III. Գործառույթներ

Վերահսկողության ԱԽ-ի և Վերահսկողության հարցերով խորհրդատուի հետ համատեղ՝ Անցումային հարցերով խորհրդատուի գործառույթներն են.

1. Աջակցել անցումային նախագծի իրականացման վերահսկողությանը

2. Իրականացնել համաձայնեցված գործողությունների վերահսկում՝ պետական մակարդակով պատասխան միջոցառումների և/կամ առողջապահական համակարգի ամրապնդման նպատակով
3. Աջակցել ՄՀՀ-ին նպատակային ջանքերի կայունության, անցման և համաֆինանսավորման հիմնական առաջնահերթությունների բացահայտման նպատակով
4. Կայունության, անցումային և համաֆինանսավորման առաջնահերթությունների վերաբերյալ գիտելիքների փոխանակում և տարածում
5. Հակիրճ նկարագրել կատարողականի վրա հիմնված վարձատրության ներմուծման մեխանիզմը առողջապահական համակարգի նախագծում և վերջինիս հետամուտ լինել Գլոբալ հիմնդրամի դրամաշնորհային ժամանակահատվածից դուրս
6. Ներկայացնել հակիրճ և ծախսարդյունավետ իրականացման նախագիծ ՄԻԱՎ-ի և ՏԲ-ի առողջության առաջնային պահպանման օղակի մեջ ինտեգրմանը աջակցելու հետ կապված
7. Աշխատել Գլոբալ հիմնդրամի հարցերով երկրի խմբի, Հիմնական Ստացողի, Վերահսկողության հարցերով խորհրդատուի և Վերահսկողության ԱԽ-ի հետ՝ դրամաշնորհների կատարման նպատակով տվյալների վրա հիմնված ընթացիկ երկխոսություն վարելու և պահպանելու համար: Տվյալների վրա հիմնված երկխոսությունը ներառում է հիմնական ֆինանսական, ծրագրային, կառավարման և ռիսկերին առնչող հիմնահարցեր/տեղեկատվություն: Վերլուծության կարևոր ասպեկտը ֆինանսական և ծրագրային տվյալների հետևողականության գնահատումն է, ինչպես նաև բացահայտված ռիսկերի հնարավոր ազդեցությունը դրամաշնորհի և ազգային ծրագրերի կատարողականների վրա
8. Աջակցել վերահսկողության հարցերով հանձնաժողովին հետևել համաֆինանսավորման պարտավորությունների կարգավիճակին՝ կիրառելով առկա գործիքները կամ ընթացակարգերը
9. Աջակցել Վերահսկողության ԱԽ-ի և խորհրդատուի կողմից մշակված առաջարկությունների ՄՀՀ-ին ներկայացնելու գործընթացին
10. Աջակցել ՄՀՀ-ի գործողություններին

#### **IV. Որակավորումներ, փորձ և հմտություններ**

##### **Որակավորումներ և փորձ**

- Ֆինանսների կամ համապատասխան ոլորտում մագիստրոսի կոչում: Ավելի բարձր գիտական աստիճանը նախընտրելի է,
- Առողջապահության ֆինանսավորման ոլորտում աշխատելու առնվազն 3 տարվա փորձ,
- Գլոբալ Հիմնդրամի ՄՀՀ քաղաքականության և հասարակության կազմակերպությունների, խոցելի խմբերի, ՄԻԱՎ-ով ապրող մադրկանց և ՏԲ հիվանդների հետ աշխատանքային փորձ,
- Երկրի առողջապահական համակարգի կառուցվածքներին ծանոթություն,
- ՄԻԱՎ-ի, ՏԲ-ի և մալարիայի համաճարակային ցուցանիշներին ծանոթություն,
- ՄԻԱՎ-ի, ՏԲ-ի, մալարիայի, ինչպես նաև մարդու իրավունքները կարգավորող օրենսդրական դաշտին ծանոթություն,
- Բազմակողմանի կառավարման միջավայրում աշխատելու փորձ:

## Հմտություններ

- Առողջապահության ֆինանսավորման և Առողջության համապարփակ ապահովագրման բնագավառի մեծ փորձ,
- Տարբեր աղբյուրներից տեղեկատվության վերլուծության հմտություն,
- Քաղաքական որոշումներ կայացնելու, ռազմավարական վերլուծություն և զեկուցում
- Microsoft Office-ի, մասնավորապես Microsoft Excel and Microsoft Project ծրագրերի վարժ տիրապետում,
- Տարբեր թիմերի հետ արդյունավետորեն աշխատելու ունակություն
- Միջանձնային ուժեղ հմտություններ և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ հաղորդակցվելու ապացուցված ունակություն
- Ներկայացնելու, աջակցելու, հաղորդակցման և գրելու վարժ հմտություններ